

ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ՆՈՒԱԳԳ ՍԱԻՈՒՂԱՅ



Յարասուչիշն սաղմուսացն Դաշի .

Հեղից զողիս , Տէր , առ սեմովք սըրբութեան .
Անձն իմ յանունդ ակընկալեալ յուսասցի .
Եւ զարթիցես ընդ ձայնս . ու աղերս իմ խոտան
Սլասցի առ քեզ իբրեւ ըզխուենկ երեկի :

Նըւաստացեալ խոնարհեցայ ի վառաց .
Իբր ըզճընճղուկ ընդ լեառն յածիմ թափառոտ .
Եւ տազնապեալ չարակոչկոճ ի վըշտաց ,
Կայ աստ հոգիս զերդ անապատ ծարաւոտ :

Ընդ սուգ ցաւոյս բերկրեալ հըրճուին գոռ ոսիւք .
Եւ ցուցեալ , Տէր , զօժեալ քոյին վըշտազգեաց ,
Տեսէք , գոչեն , ելիք ըզնա իւրն Աստուած .
Ծիծաղեցաւ անցորդն առ գուլթ իւր Մողդ ,
Եւ ըզզըլուխ իւր չարժեաց :

Լարեա՛ զաղեղն . արի , եւ զիս դատեա , Տէր .
Լից ըզկապարճս իմ բոցաշունչդ ի նետից .
Եւ լափիլիզող շանթք կայծականցդ ի յերկնից
Տացեն նոցա ըզմահ զոր ինձ նիւթեալն էր :

Ելեալ գայ Տէր . կամարն ահա խոնարհի
Անկէտ երկնից սասանելոյ ընդ նովաւ .
Ռահ իւր փայլէ ի բոց շանթից եւ յարիի ,
Զուարթունք թուուցեալք ըզմահ վարեն զառաջեալ :

Ծաւալի ծուխ սըրտմըտութեանն ի բոցոյ .
Ի նշոյլ փայլմանցըն փեռեկին ամպք երկնի .
Մէն յակնարկիս իւր տեսոյ
Երկիր ծախեալ ըսպառի :

Հա՛ բարբառի . յահեղն ի ձայն
Երկիւղալից սասանեցան

Մայրք Լիբանու, Լանապատաց քարանձաւք,
Յորդանանուն պարզի յալուց ակն աղբեր,
Եւ տիեզերաց մէտ յերեր
Հիմունքն ի յայտ դան բացեալք :

Ի ձեռս իմ Տէր մատնեաց ըզճետ անըզգամ
Գոռոզ որդւոց ժանտն Ամմոնայ :

Արի, Սաւուղ, ի քող յաւէժ թուխ մըթան
Ընկըղմեսցի անուն նոցա :

Ձիւնչ տեսանեմ. դողայք բըռունք խրոխտապանժ .
Դիւցազն ըզտէզն ի յաջում
Ճօճեալ սուրաց եռանդուն,
Եւ ի տեսիլ լոկ նորուն՝
Սոսկումն աչացն անդէն ընդ սիրտ ձեր էանց :

Խոյս տուք... աւանդ. նա ահրնկէց սուսերաւ
Գրծեալ ըզձեօք պարոյր ի ծիր ահափետ,
Դիմէ ընդ բնաւ ձեզ հետամուտ եւ ի դէտ .
Եւ որ բիւրուցս ի ճապաղիս ձեր թաթաւ,
Դեռ արբենայ յարենէդ :

Յաղթ իւր երիվար
Կոխէ զերդ դալար
Ըզկոյտ դիականց .
Դիւցազին մըտրակ
Վարէ զնա երագ
Ընդ կարգ բանակաց .
Հուր ծաւալ շուրջ փակ .
Գանչեն սաղաւարտք
Դ՝ ոտիւքն յարին մաժ :
Յընթացն հապըշտապ՝
Խուժանն ապըստամբ
Տապաստ անկանի
Նետիւքն հըրաբոց,
Հանգոյն զերդ փոշի
Վարեալ ի հողմոց :

Իսմայէլեանք գոռք ուր էք,
Ճետ Մովարու, զաւակ տոհմին Եդովմայ .
Իդոմէք, քաջք Ամմոնայ,
Եւ դու յոխորտ զարմ՝ Տիւրոսի, Սիդոնայ,
Եւ դու վայրագդ Ամաղէկ :

Կան աւանիկ իբրեւ զաղբիւր ցամաքուտ .
Եւ յիշատակ նոցուն յանհետ ի կորուստ :

Ո՛հ, մեծ են ինձ, Տէր, պարգևքդ երկնատուրք .
Յամս ծերութեանս պըսակեսցէ Տէր զարքայդ,
Իմ է Եփրեմ և Մանասէ, Գաղաադ .
Յակովբ վահան իմ եւ գըլխոյս է նեցուկ :
Ո՛հ, մեծ են ինձ, Տէր, պարգևքդ երկնատուրք .
Յամս ծերութեանս պըսակեսցէ Տէր զարքայդ :

Յարեւելիցն ի ծագաց
Յարեւմըտից եզր ափանց
Տըւաւ սահման յԱնեղէն .
Եւ մարդաշատ Սաբա, պարարտն Եթովպիա,
Ծով Տիւրոսի ճոխն եւ ամայք Արաբայ
Ձիսրայելին պետ պաշտեն :

Ծափս հարէք ազգք . գայ արքայիցն արդ արքայ .
Ահա ելեալ նըստաւ յիւր գահ գերապանծ .
ԸզՍիոնի կանգնէ հիմունս յաւիտեանց .
Յուսապատար բերկրեալ լեառն անդ խայտայ .
Ծափս հարէք ազգք . գայ արքայիցն արդ արքայ .
ԸզՍիոնի կանգնէ հիմունս յաւիտեանց :

Յարդարաբաշխ իւր աջոյ
Սըփոէ ազանց ըզլիութիւն եւ զանդոյր .
Յընծա Սիոն . ընդ քաղցրախորժ յարկաւ քոյ,
Իբր ի Կադէս բուրեան արմատն արմաւոյ,
Միշտ ուղղութիւն եւ հաշտութիւն կան ամուր :
Յարդարաբաշխ իւր աջոյ
Սըփոէ ազանց ըզլիութիւն եւ զանդոյր :

Ընդ Սիոնի սուրբ տաղաւարսն հաճի Տէր
Քան ընդ խորանս Յակովբայ .

Բնակեալ անդէն , տայ զպատգամաց իւր պատուէր .
Ուր փայլեն փառքն եւ սքանչելիք զեր ի վեր .
Հանգոյն նրմին Սիոն կացցես դու անմահ :
Ընդ Սիոնի սուրբ տաղաւարսն հաճի Տէր
Քան ընդ խորանսն Յակովբայ :

Անդ լաւ իցէ քան ըզհազարս՝ օր մի լոկ .
Ուր եւ արքայ , զորով պատեն շուրջ ժողովք
Քաղցրիկ որդւոցն յողունց , նրմին փառք եւ ցուպ ,
Գնայ յալեւոյթ , զերդ ձիթենին այն ատօք ,
Զորով շաքլեալ ծաղկեն բողբոջք առ բնոյն հուպ :

Լ Ա Մ Ա Ր Դ Ի Ն

ՔԱՐԳՄ . 4 . ՍԱՄ . ԿԱՑՍԵՐԵԱՆ

Մարտ

Ի մարտ ամսոջն՝ արժան է 'ի լեառն
և 'ի հովային տեղիքն առնել զտնկելն ,
որպէս զփետրուարն՝ 'ի դաշտն յիշեցաք :
Նոյնպէս և զպատրուսելն յառաջ քան
զպտկելն . նա 'ի հովն է իւր ժամն . և
զպատրուս կտրելն և շինելն՝ սուր սա-
րուածով՝¹ է պարտ առնել որ չաւերէ
զմայրասն² . և զպատրուսն , և զփորելն ,
զվաստակելն և զակնբցելն՝³ 'ի սոյն ա-
միսս և 'ի ժամս է պարտ առնել . և 'ի
վաստակելոյ ժամուն որ անձրև լինի՝

1 Պատուաստի գործի , կտրոց :
2 Ծառին պատուաստած տեղն :
3 Տնկելու տեղ բանալ :

խիստ պիտանի է և պտղաբեր առնէ . և
զքախնելն¹ պարտ է յառաջ քան ըզ-
խոտի հունդրուելն² առնել 'ի նոյն ժամն .
և զձիթենիքն յառաջ է պարտ ակն-
բցել և շինել քան զայլ ծառքն և զհեր-
կերն . նոյնպէս փոստակերն յեղել և
սրբել յամենայն ազգ խոտոց , որ զար-
տրն աղէկ տայ . արժան է որ ամենայն
ազգ երեք հարօր լինի , թէ ոչ պիղծ է
և աւեր :

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

1 Քաղէլ հանել խոտերը :
2 Խոտին հունտի երթալն :